Էդգար Զոհրաբյան

1978թ.	սեպտեմբերի 29-ին ծնվել է Եղեգնաձորի շրջանի Խաչիկ գյուղում՝ մտավորականի ընտանիքում։ Հայրը մասնագիտությամբ եղել է ինժեներ-մեխանիկ, մայրը՝ մանկավարժ։ Ընտանիքում եղել են երեք երխա՝ մեկ քույր և երկու եղբայր։
1985թ.	հաճախել է Խաչիկ գյուղի միջնակարգ դպրոցը։
1995թ.	ավարտել է Խաչիկ գյուղի միջնակարգ դպրոցը և ընդունվել է այժմ սպարապետ Վ. Սարգսյանի անունը կրող ռազմական ինստիտուտը, սակայն ընտանեական խնդիրների պատճառով ուսումն ընդհատել է։
1996թ.	հոկտեմբերի 18-ին զորակոչվել է ծառայության՝ ՀՀ ԶՈՒ-ում։
1998 թ.	զորացրվել և վերադարձել է հայրենի գյուղ։
1999թ.	ընտանիքով տեղափոխվել է վերաբնակության ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Գետամեջ գյուղում։
2001թ.	ընդունվել է Ստեփանակերտի <Գրիգոր Նարեկացու> անվան համալսարանի բանասիրական ֆակուլտետ՝ անհատական կարգացույցային ուսուցմամբ։
2006թ.	ավարտել է ուսումը։
2001թ.-ից	**մինչև սույն տարվա հունիս ամիսը աշխատել է Գետամեջի միջնակարգ դպրոցում՝ որպես <Հայոց լեզու> և <Գրականություն> առարկաների ուսուցիչ։**
2010 թ.-ից	ուսուցչությանը զուգահեռ ստանձնել է տնօրենի տեղակալի պաշտոնը՝ մանկա-պատանեական դաստիարակության և կրթության գծով։
2000 թ.	օժանդակել է Քաշաթաղի շրջանում Արցախի Երիտասարդական Միության մասնաճյուղի բացմանը, նշանակվել մասնաճյուղի վարչության պատասխանատու և մինչև 2005 թվականը ընդլայնել կազմակերպությունը՝ շրջանի տարբեր համայնքներում ստեղծելով երիտասարդական խմբեր։
2011թ.	ընդունվել է ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի մագիստրատուրայի <Ժուռնալիստիկա> բաժինը
2012թ.	հուլիս ամսին տեղափոխվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն։ Ամուսնացած է։
2012թ.	նոյեմբերից Բեռլինի Հայկական Դպրոցում Հայոց Լեզվի եւ Գրականության ուսուցիչ։
2013 թ.	ավարտել է ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի մագիստրատուրայի <Ժուռնալիստիկա> բաժինը մագիստրոսի որակավորմամբ։
2013 թ.-ից ցայսօր	ՀԵՄԱ անդամ եւ «Բեռլինի Հայկական Դպրոց նախագծի ղեկավար»։